



112. ԱՆՋԳԱՄ ԿՆԻԿ

Հալ ու հեթաթ, ժամանակով կնիկ մ կէղնի, անուն Շուշան, հմալ անզգամ, օր մըջ ախշըրքին նա՛ էղեր է, նա՛ կէղնի: Մարդ գիշեր ցերեկ կը մտածեր, թե ի՛մալ էնիմ, օր Շուշանի ձեռքեն ազատիմ:

Օր մե կէրթա դաշտ, կը մոտենա քարի մե, քարի տրկեն դմուն ու օրոտումի ձեն գիկա. դքար կը շրջե, կը տեսնա մեջ լիք սատանա: Զքար էլման կը շրջե վրեն, կըսե.

— էլ հմլա տեղ շկա, զՇուշան բերիմ թալիմ մեջ, թ՛էրթա սատանեստանու հետ ապրի, իմ փողպատ ազատվի ուրնե:

Մարդ կէրթա զՇուշան կը բերե, կը թալե սատանեստանու մեջ, կը դառնա գիկա տուն: Շաբաթ մե թե էրկու քետե գիկա դքար կը շրջե, կը տեսնա, օր Շուշան զսատանեք քմեն քշեր հաներ է հորու բերան, տակի կողմ մանցեր է ուր ձեռք...

Սատանեք կըսին.

— Մա՛րդ, զմըզի Շուշանի ձեռքեն ազատե, ինչ գուզիս կիտանք:

— Ի՛նչ կիտաք:

— Զհորու բերան բաց թող, մենք կէրթանք, կը մտնինք թագավորի տղի մեջ, կը տանջինք, դու կէղնիս հեթիմ, դիկասս յանի վձեռքդի կը դնիս վըր տղի գլխուն, մենք ընդրա միջեն դելնանք կը մտնանք վազիրի տղի մեջ, թագավոր քըզի փարա շատ կիտա, կէղնիս մալ ու դուվըթի տեր... լե տե՛ս, օր վազիրի տղից հանեցիր՝ կը մտնանք քու մեջ...

Սատանեք կէրթան, կը մտնան թագավորի աղի մեջ: Շուշանի մարդ կէղնի հեքիմ, ներս կը մտնա թե չէ, սատանեք խոսքի տեր կէղնին, դելնին թագավորի տղից, կը մտնան վազիրի տղի մեջ:

Մարդու անուն անգամ մե քելեր էր. հեքիմ էր: Վազիր կը ճամպիլ բերե, օր զուր տղեն լե ագատե: Հեքիմ ներս կը մտնա. սատանեք կը շվճվան...

— Յորի՞ն էկար, չէ մըջ մըզի խավլ ու խարար կա, կեցի հմալե մտնանք քու մեջ...

— Տո՛ ջանըմ,— կըսե,— Շուշան հորուց քելեր է, հա՛ մկա դիկա ձրը մոտ, էկա, օր ձըղի խարար տամ, ձըր գլխու ճար էնիք...

Սատանեք ղՇուշանի անուն օր կը լսին՝ կը փախնին՝ վազիրի տղեն լե կաղատվի...

